ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ք. Հրազդան 22.02.2018թ. ժամը 14^{00}

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-18/3>> ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ալեքսան Եղիշյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

Համլետ Ստեփանյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ,

Գոռ Մադոյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ,

Վարդան Քալանթարյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Համլիկ Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Նիստին ներկա չէր հանձնաժողովի անդամ Քրիստինե Յավրիյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հայտերի գնահատում.

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած ընկերությունները՝ <<Ֆլեշ Մոտորս>>ՍՊԸ-ն և <<Կրիպտոն>>ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

1.2 Առաջին տեղ զբաղեցրած ընկերությունները՝ <<Ֆլեշ Մոտորս>>ՍՊԸ-ն /21.02.2018թ./ և <<Կրիպտոն>>ՍՊԸ-ն /19.02.2018թ./ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել են հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը, ինչը համապատասխանում է <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-18/3>> ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

2. Գնահատող հանձնաժողովն որոշեց.

2.1 <<Կրիպտոն>> ՍՊԸ-ին /չափաբաժին 1/, <<Ֆլեշ Մոտորս>>ՍՊԸ-ին /չափաբաժին 2-3/ ճանաչել ընտրված մասնակիցներ:

2.2 Կիրառել անգործության ժամկետ."Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել պայմանագրի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	----------	***Ա.Եղիշյան***
անդամներ՝	----------	***Հ.Ստեփանյան***
	----------	***Գ.Մադոյան***
	----------	***Վ.Քալանթարյան***
Քարտուղար՝	----------	***Հ.Հակոբյան***